

ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 1996-2001ԹԹ.

1990-ական թվականներից սկսված արտագաղթը, որն իր գագաթնակետին հասավ 1992-1994թթ., երբ Հայաստանը երեք տարվա ընթացքում կորցրեց իր բնակչության գրեթե 15%-ը, հետագա տարիներին ևս շարունակվեց որոշակի տատանումներով :

Ինչ վերաբերում է արտագաղթի մեծ չափերին, ապա պետք է նշել, որ 1992-1994թթ., դրանց հիմնական դրդապատճառներից էին էներգետիկ ճգնաժամն ու Ադրբեյջանի հետ սահմանային գոտու բնակավայրերի ռմբակոծությունները:

Արտագաղթի հաջորդ ալիքը տեղի ունեցավ 1995-1996 թթ., որի ժամանակ բնակչության գերակշռող մեծամասնությունը մեկնեց արտագնա աշխատանքի՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն: Հեռավոր արտերկրներ Հայաստանից կատարված արտագաղթի զգալի մասը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, Հունաստանին և Իսրայելին:<sup>1</sup>

1995-1996 թթ. արտագաղթի ծավալները կարող էին շատ ավելի մեծ լինել, եթե Ռուսաստանում չխստացվեր մուտքի և ելքի թույլտվությունը, և որ կարևոր է, չիրահրվեին հակահայկական տրամադրություններ ու սադրանքներ :

1997 թ. Հայաստանի Հանրապետությունից սկսվում է արտագաղթի նոր ալիք: Այս շրջանում նկատվում էր բնակչության տեղաշարժերի որոշակի կայունացում, որը նախորդ տարիների համեմատությամբ բնութագրվում էր ավելի փոքր արժեքներով ( 40-50 հազար մարդ):<sup>2</sup>

Արտագաղթը շարունակվեց նաև 1998թ., նախագահական և դրան հաջորդած Ազգային ժողովի ընտրություններից հետո, և, հատկապես հոկտեմբերի 27-ի ահաբեկչական գործողության հետևանքով: Նշենք նաև, որ Հայաստանից հեռանում էին հիմնականում նրանք, ովքեր նյութական հնարավորություններ կամ արտերկրում բարեկամներ ու ընկերներ ունեին: Իսկ Հայաստանի բնակչության այն մասը, որը հարազատներ չունի արտերկրում, գնալով համալրել է աղքատների շարքը:

Փորձագետների նախնական գնահատականների համաձայն 1999 թ., նախորդ տարիների համեմատ միգրացիայի հաշվեկշիռը բացասական էր, որի արժեքները երկու անգամ ավելի էր ու կազմում էր 75-80հզ. մարդ:<sup>3</sup> Այս հանգամանքը, մեր կարծիքով, հիմնականում բացատրվում է սոցիալ-տնտեսական պատճառներով: Կայացած արտագաղթը փոխարինվում է այսպես կոչված

սոցիալ-հոգեբանականով, որի կարևոր դրսևորումներից է հանդիսանում ընտանիքների վերամիավորմանը նպատակաուղղված արտագաղթը: Այսինքն, եթե առաջ արտագաղթի հիմնական նպատակը դրսում աշխատելն էր և Հայաստանում մնացած իրենց ընտանիքներին ապահովելը, ապա այժմ արտերկրում հիմնական աշխատանք և գոյության այլ միջոցներ գտնելով, ընտանիքներին տանում են իրենց մոտ, որը ժողովրդագրական գործընթացների տազնապահարույց երևույթներից մեկն է: 2000թ. Հայաստանից արտագաղթի բացասական հաշվեկշիռը կազմել է 57499 մարդ, իսկ 2001թ. այդ ցուցանիշը հասավ 60389 մարդու:<sup>4</sup>

Ըստ պաշտոնական տվյալների մեկնողների հիմնական մասը բաժին է ընկնում երևանին՝ 34,3%, Լոռու մարզին՝ 11,1%-ը, Շիրակին՝ 10,9%-ը, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերին համապատասխանաբար՝ 10,8 % և 9,1%-ը: 1998 - 1999 թթ. Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ հանրապետությունից հեռացել է 760-780 հազար մարդ, որոնցից 600 հազարը հանրապետության մշտական բնակիչներն էին :

<sup>1</sup> «Миграция» ամսագիր , # 3 , 2000թ., էջ 35:

<sup>2</sup> Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ , ՀՀ ՄՓՎ , Եր., 2000թ., էջ 7:

<sup>3</sup> Статистический ежегодник Южно-Кавказских стран , 2000г., с. 63:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության սահմանային ուղևորահոսքի ուսումնասիրություն , ՍԿԾ , Եր., 2001 թ., էջ 23: